Տ. ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ԽԱՐԱԶՅԱՆ



Ծնվել է 1958 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: Ավագանի անունը եղել է Խաչիկ: 1964 թ. Լիբանանից ծնողների հետ ներգաղթել է Սովետական Հայաստան՝ բնակություն հաստատելով Լենինական քաղաքում: Նույն թվականին հաճախել է Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցը, որի ուսման լրիվ դասընթացն ավարտել է 1973 թ.:

Այնուհետև տեղափոխվել է Էջմիածին և ընդունվել հոգևոր ճեմարան:

1978 թ. մայիսի 27-ին Մայր տաճարում Տ. Հուսիկ արքեպիսկոպոսից ստացել է սարկավագական աստիճան:

1979 թ. ճեմարանում հաջողությամբ ավարտել է ուսումնառության վեցամյա շրջանը և ապա, 1980 թ. ապրիլին, նույն հարկի տակ պաշտպանել «Հառիճա վանքը» թեմայով իր պատրաստած ավարտաճառը՝ արժանանալով հոգևոր ճեմարանի ավարտական դիպլոմի:

1981—1982 տարեշրջանում, որպես ապատ ունկնդիր, Զագորսկի վանքում հետևել է հոգևոր ակադեմիայի դասընթացներին՝ միաժամանակ ծառայելով Մոսկվայի հայոց եկեղեցում:

1983 թ. հոկտեմբերի 16-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ներսես եպս. Պողապյանի:

Տ. Թորգոմ աբեղան, օժտված լինելով լավ ձայնով, իր եռանդուն մասնակցությունն է բերում եկեղեցական արարողություններին: